

• Գ Ր Ա Ւ Օ Ս Ա Կ Ա Ն •

ՅՈՒՅԱԿ ԶԵՆԱԳՐԱՅ ԱՐՄԱՇԻ ՎԱՆՔԻՆ
- Պատրաստեց Յ. Թօփմեան: Քառա-
ծալ, քղբակազմ, էջ 544: Վեներտիկ,
Ս. Ղազար, 1962:

Գալուստ Կիւլպէնկեան Հայկական Մա-
տենաչարին այս հատորը խնամեալ տպա-
գրութեամբ կատարուած զնահատելի
գործ մըն է:

Արմաշին վանքին գրչագիրներուն հա-
ւաքածոն մեծ Շղեռնին ի սպառ փճացուած
կորսուած կը նկատուէր: Այս առթիւ յար-
մար կը նկատեմ յիշելու որ այս հաւաք-
ման ինչ ինչ գրչագիրներն ալ կրնան հոս
ու հոն փրկուած ըլլալ կորուստէ, քանի
որ՝ օրինակ՝ իմ հաւաքածոյիս մէջ Ար-
մաշի հաւաքման նախկին թիւ 200 գրչա-
գիր Մաշտոցը կայ: Ինծի զրկուած է Կ.
Պոլսէն, ուրիշ գրչագիրներու հետ: Նոյն
ատեն պէտք է յիշել որ Արմաշի հաւաքա-
ծոն չունէր առուծախի համար նպաստա-
ւոր վիճակի մէջ, ծաղկեալ, հնադարեան
գրչագիրներ, որով աւարատեանութեան
նիւթ չէին կրնար ըլլալ: Եւ այդ իսկ պատ-
ճառաւ կարելի է մեծ մասամբ չփրկուե-
ցան:

Արմաշի 223 գրչագիրներէն 114ը 1800-
ական թուականներէն էին եւ 51 հատ ալ
1700ական թուականէն, որով 223 գրչա-
գիրներէն 165 հատը ուշ ժամանակի, ԺԸ
եւ ԺԹ. դարու օրինակութիւններ կամ
գործեր են: Արմաշի հաւաքածոն զուրկ է
գեղարուեստական նշանակութիւն ունե-
ցող գրչագիրներէ, եւ ոչ ալ նպաստ մը
կրնայ բերել հայ կազմարարութեան հա-
մար:

Ըստ իս մասնաւոր կարեւորութիւն մը
կը ներկայացնէ թիւ 207, որովհետեւ
1449ին Պուրսա գրուած է: Որքան որ ին-
ծի ծանօթ է, ասիկա հնագոյն գրչագիրն
է Պուրսա գրուած մեր գրչագրական հա-
րըստութեան մէջ: Զարմանալիօրէն Կիլի-

կեան ոչ մէկ գրչագիր չէ եղած այս հա-
ւաքման մէջ: Ա՛լ աւելի զարմանալի է մի-
այն չորս Աւետարան պարունակելը: Կ'ե-
րեւի թէ աւելի ճիշդ տրուած է անսովոր
գրչագիրներ հաւաքելու՝ իրենց պարու-
նակութեան համար:

Նորօրինակ է ցուցակագրութեան ձեւը՝
այս տպագրութեան մէջ: Հաւանաբար
պրպտողին դիւրութիւն ընձեռնելու հա-
մար: Ուրախ ենք որ տպարանը յոգնեցու-
ցիչ մանրատառ չէ գործածած:

Յառաջարանին մէջ ցուցակագիր Յ.
Թօփմեան՝ Երուսաղէմի մէջ շուրջ 6.000
գրչագիր կը նշանակէ, ինչ որ ճիշտ չէ:
Սաղէմի մեր վանքին հաւաքածոն հազիւ
4.000 գրչագիր կը պարունակէ: Էջմիածնի
հին հաւաքածոն այսօր կորիզն է Երեւանի
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ. իսկ Էջմիածնի նոր
հաւաքածոն հազիւ 200 գրչագիր ունի:
Վենետիկի մեր վանքին հաւաքածոն բնա-
կան է կ'անցնի 2.000 թիւը, որ Թօփմեան
նշանակած է. բայց աւելի ճիշտ կ'ըլլայ
նշանակել 2.200. սակայն ասոնք հին գրչ-
ագիրներ են. եթէ մենք ասոր խառնենք
ԺԸ. եւ ԺԹ. դարու ձեռագիրներ, այն ա-
տեն Վենետիկի մեր հաւաքման գրչագրա-
կան գումարը կրնայ բարձրանալ 3.000ի:

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւ-
նը մեծապէս զնահատելի գործի մը ձեռ-
նարկած է հրատարակելով մեր գրչագրա-
կան հաւաքածոներուն ցուցակները: Խիստ
մեծ կարիք կայ Նոր Զուղայի Ամենափր-
կիչ վանքի հաւաքածոյին ցուցակին հրա-
տարակութեան, որ մաղթենք գունաւոր
ու սեւուճերմակ նկարներ ալ ունենայ:

Անհետացած գրչագրական հաւաքածո-
ներու այս ցուցակները, Կ. Պոլսոյ Ազգա-
յին Մատենադարանին, Անկիւրիոյ եւ Ար-
մաշի վանքերուն, մեզի գաղափար կու-
տան հոն եղած հաւաքածոներուն մասին:
Այդ հաւաքածոներէն Ազգային Մատենա-
դարանի գրչագիրներէն շատեր այժմ մաս
կը կազմեն օտար հիմնարկութեանց եւ հայ
ու օտար գրչագիր հաւաքողներու հաւա-
քածոներուն: Անկիւրեայիներէն ցարդ ոչ
մէկ գրչագիր յայտնուած է:

Հայկական բանասիրութիւնը անկաս-
կած սրտանց երախտապարտ է Գալուստ
Կիւլպէնկեան Հիմնարկութեան այս ար-
ժէքաւոր գործին համար: Մաղթենք որ
հետապնդէ այս ընտիր միջոցը՝ հայ մշա-
կութին օգտակար ըլլալու եւ խթան ըլ-
լայ յաջորդական ցուցակներու հրատա-
րակութեան: Խիստ զնահատելի գործ
պիտի ըլլար նաեւ Հիւսիսային Ամերիկա-
յի Միացեալ Նահանգներուն զանազան
հաստատութեանց մէջ ցրուած կարեւոր
քանակով եւ որակով գրչագիրներուն խը-
նամեալ եւ լիակատար ցուցակը հրատա-
րակել: Այդ գրչագիրներուն թիւը գրեթէ
165ի կը հասնի: Անհատական հաւաքածո-
ներու մէջ գրչագիրներու թիւը կրնայ
500ը քիչ մը անցնիլ, քանի որ իմ հաւաք-
մանս մէջ շուրջ 325 գրչագիրներ ունիմ:
Այս առթիւ ըսեմ որ հաւանաբար շատ հա-
մառօտ ցուցակ մը իմ գրչագիրներուս
գուցէ հրատարակուի Երեւանի Մատենա-
դարանի ԲԱՆԲԵՐԻՆ մէջ, խմբագրութեան
ազնուութեամբ. սակայն այս հաւաքա-
ծոյին մանրամասն եւ լիակատար ցուցա-
կին հրատարակութիւնը դժբախտաբար
իմ նիւթական միջոցներէս վեր է:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

* * *

ՈՒՐԱԿԳԾԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ - Գրեց Թ. Խ.
Յակոբեան: Լաքակազմ, էջ 480 եւ ա-
ռանձին աշխարհացոյցներ, ուրաւալ:
Երեւան, 1960:

Երեւանի Պետական Համալսարանի հը-
րատարակութիւն: Շահեկան գործ մը, որ
կ'երեւի թէ աւելի ընթերցանութեան հա-
մար կատարուած ամփոփում մըն է, քան
թէ ազդեցաւ գիտական գործ մը:
Ասիկա բնական է չի նշանակել, որ այս
արժէքաւոր գործը լրջութեամբ չէ պա-
տրաստուած եւ պէտք է անուշադիր թո-
ղուլ: Ընդհակառակն, շատ կարեւոր հը-

րատարակութիւն մըն է, ուր խղճմտօրէն
հեղինակը կը ջանայ Հայն ու Հայաստա-
նը ներկայացնել իր ծագումէն մինչեւ ի.
դար:

Ինչպէս նման ամէն գործ, այս ալ ունի
իր վիճելի կէտերը: Ըստ երեւոյթի հեղի-
նակը որդեգրելով այս կամ այն տեսա-
կէտը, կը ջանայ հեռու մնալ վիճելի հար-
ցեր գրգռելէ եւ արծարծելէ: Եւ սակայն
քանի որ այս գործը հաւանաբար ծրա-
գրուած է լայն խաւերու համար, եւ տը-
պաքանակը 7.000 է, ու խմբագրութեամբ
մատչելի հասարակութեան, կարգ մը կա-
րեւոր կէտեր գոնէ պէտք է ներկայաց-
ուէին տարակուսանքով, ինչպէս որ ար-
դարեւ անոնք են պատմագիտութեան մէջ:

Օրինակի համար, երբ Յակոբեան կը
խօսի «Հին Հայաստանի Բնակչութեան
Թիւի, Յեղային Ծագման եւ Խտուքեան»
մասին արդարեւ մենք կը հանդիպինք նիւ-
թերուն վերաբերող տարակուսելի հար-
ցերու: Էջ 77 վճռականօրէն կ'ըսէ. «Հին
Հայաստանի հայ բնակչութեան թիւը չի
անցել 5-6 միլիոնից: Հաւանական պէտք է
համարել, որ բուն Հայաստանի բնակչու-
թեան թիւը 5-6 միլիոնի է հասել 13րդ
դարում, մոնղոլների աւերիչ արշաւանդ-
ների նախօրեակին»: Ասիկա խախտու եւ-
թագրութիւն մըն է, որ հեղինակը փոխ
առած կ'երեւի Յակոբ Մանանդեանէն:
Մոնղոլներուն արշաւանքէն եւ անոնց Հա-
յաստան մտնելէն երկու դար առաջ սկսած
կը դառնան հայոց արտագաղթը Սելճուկ-
ներու արշաւանքներուն պատճառաւ, ինչ-
պէս նաեւ Բիւզանդական-Սելճուկ մար-
տնչումներուն հետեւանքով: Եւ նոյնիսկ
այդ շրջանին եւ անկէ դար մըն ալ առաջ,
Բիւզանդական Հայաստանատեաց քաղա-
քականութեան պատճառով՝ յարաճուն
գաղթականութիւն մը Հայաստանի հայ
բնակչութիւնը կը պարպէր թէպի Ղրիմ,
Լեհաստան ինչպէս նաեւ
Պալքանները, Լեհաստան ինչպէս նաեւ
դէպի Կիլիկիա եւ սահմանամերձ գաւառ-
ներ, դէպի Սեբաստիա եւայլն: Ուրեմն,
կարելի է «մոնղոլների աւերիչ արշա-
ւանքների նախօրեակին» վերագրել Հա-

